

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ  
2017 թ. սեպտեմբերի 19-ի թիվ 1 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Անվանական կրթաթոշակի հավակնորդների թեկնածությունների առաջադրման և հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմյան, Գ. Գ. Ջուլիակյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Աշոտի Հարությունյանին՝ 2017 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թ. մարտի 1-ը ստանալու «Հարություն քահանա Շմավոնյան» կրթաթոշակը:

բ) Երաշխավորել բակալավրիատի առկա ուսուցման չորրորդ կուրսի ուսանողուհի Լուսինե Արսենի Աթաբեկյանին՝ 2017 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թ. մարտի 1-ը ստանալու «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակը:

ԼՍԵՑԻՆ.- Լուծարքային շրջանների կազմակերպման և ընթացքի մասին դեկանի տեղակալ Ա. Ռ. Մենեմյանի հաղորդումը:

ԼՍԵՑԻՆ.- Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի միջնորդությունը նույն ամբիոնի աշխատակիցների մասնակցությամբ հայերեն թարգմանված Ջոնաթան Բիզնեյի «Տեղեկատվամիջոցների նշանագիտության ներածություն» գիրքը տպագրության երաշխավորելու խնդրանքով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- Ն. Ն. Մարտիրոսյան, Մ. Մ. Հովսեփյան, Դ. Վ. Պետրոսյան, Զ. Զ. Մարգարյան:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Ջոնաթան Բիզնելի «Տեղեկատվամիջոցների նշանագիտության ներածություն» գիրքը երաշխավորել տպագրության:


ԼՍԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյանի հաղորդումը հեռուստաստուդիայի, ձայնագրման և մոնտաժի տաղավարի կահավորման մասին:

*Ն. Մարտիրոսյանը գիտխորհրդին հանգամանորեն ներկայացրեց հեռուստաստուդիան տեխնիկական նոր միջոցներով համալրելու առկա հնարավորությունները, ձայնագրման և մոնտաժի նոր տարածք ստեղծելուն և կահավորելուն միտված աշխատանքների ընթացքը: Դեկանը նշեց, որ այս հարցում հստակություն կլինի երկրորդ կիսամյակի սկզբում, և այդ ժամանակ գիտխորհուրդը կտեղեկացվի մանրամասներին:*

Հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ա. Ռ. ՄԵՆԵՄՇՅԱՆ